ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հոկտեմբերի 2024թ. N ՄՈ/488 -Ա

ք. Արմավիր

ԹԵՀՄԻՆԱ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի զեկուցագիրը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Թեհմինա Սիրեկանյանին:

2. Թեհմինա Սիրեկանյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 18-ից:

2024-10-18 10:37:10 GMT+4
Հավաստվում է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**